ԵԼՔ

1.	6 Ուսուցչի և 2 վարժուհու ռոճիկը . . .	2300	
2.	Ծառաներին վարձ	107	
3.	Հինութեան վրայ և ձեռագործի	112	74
4.	Մանրածախք և հին գրքերի վնասը . . .	139	29
5.	Բլանկներ, գզրոց և նստարաններ . . .	39	
6.	Վառելիքի	43	50
7.	«Ցիշատակարանի», ուսումնարանի գրադարանի ու աղքատ աշակերտների համար գրքերի . . .	90	91
	Գումարն է	2832	44

Պատասխանատու Հոգաբարձու Մատթէոս Ալիքիկեանց
Անդամք հոգաբարձութեան՝ Գրիգոր քահանայ Բալագեօզեանց
Ստեփան Բատիկեանց
Զոհրաբ Ատամեանց:

ՊԱՏՏՕՆԱԿԱՆ

ԲԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ.

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի Ազգիս ի 6 Մարտի թ. 97, յանուն Յարգելի Սարգսի Թևանեան Հախնազարեանց, որով ի յարգանս երկոտասանամեայ անընդհատ և հաւատարիմ հոգաբարձութեան նորա և գանձապահութեան ի դպրոցս Հայոց Վերին—Աղուլեաց՝ շնորհեցաւ նորին յարգութեան կոչումն մշտնջենաւոր պատուաւոր հոգաբարձուի յիշեալ ուսումնարանաց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Ազգիս, ի 13 Մարտի թ. 104, որով հաստատեցաւ ի պաշտօն նախագահի հոգաբարձութեան վասն եկեղեցական—ծխական միդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Սուրբմի բարեկ. Ներսէս քահ. Տէր Պետրոսեանց՝ ի տեղի Յովսէփ ուսագ. քահանայի Առիւծեանց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Ազգիս ի 13 Մարտի թ. 105, որով ընդարձակեցան իրաւունք փոխանորդի թեմական ի Հայոց Երևանայ՝ բանալ ի Տաշքուռուն գեղջ եկեղեցական—ծխական միդասեան տղայոց ուսումնարան։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Աղգիս ի 13 Մարտի թ. 106, որով հաստատեցաւ ի պաշտօն նախագահի հոգաբարձութեան եկեղեցական—ծխական միդասեան երկսեռ ուսումնարանաց Հայոց Եկատարինոդար քաղաքի՝ բարեկ. Գէորգ քահ. Զաքարեանց ի տեղի Մինաս աւագ քահանայի Բաբեանց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Աղգիս ի 17 մարտի թ. 115, որով հաստատեցան ի պաշտօն Հոգաբարձութեան վասն եկեղեցական—ծխական միդասեան աղջոյց ուսումնարանին Հայոց Թեմիր—խան—Շուրայու՝ Ցարգելիք՝ Պետրոսն Բախիշեան Սարգսեանց և ի պաշտօն անձնափոխանորդի նորին պատուելի Ինժիներ պօդպրապօրշիկ Եփրեմն Աւշարեանց։

—

Կոնդակ Վեհ. Հայրապետի Աղգիս ի 17 մարտի թ. 116 որով հաստատեցան ի պաշտօն Հոգաբարձութեան վասն եկեղեցական—ծխական միդասեան աղջոյց ուսումնարանին Հայոց Ամրուան գեղջ Նուխուոյ գաւառի՝ բարեկրօն Ցարութիւն քահանայն Ցարութիւնեանց, երեցփոխանն եկեղեցւոյ տեղւոյն և Ցարգելի Ցարութիւնն Էլչեանց, իսկ ի պաշտօն անձնափոխանորդի՝ պատուելի Բախիշն Մարգարեանց։

—

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Վեհափառ Հայրապետի Աղգիս ի 25 մարտի թ. 138, յանուն բազմաշխատ պաշտօնէի եկեղեցւոյն Հայոց Ախալքալակ գեղջ՝ Գօրւոյ գաւառի Ծերունազարդ Յովհաննէս աւագ քահանայի Տէր Աստուածատրեան Տէր Գալստեանց, որով թոյլատրեցաւ նմա, եղբօր նորին և ամուսնւոյ վերջնոյս, զի յետ մահուան նոցին թաղիցին ի գաւթի իւրակերտ հոյակապ քարաշէն եկեղեցւոյ տեղւոյն, որ վասն ծախեալ են նոքա ի սեպհականութեանց իւրեանց ց30,000 հազար ռուբլիս և խոստացեալ են կառուցանել նա և երկսեռ ուսումնարան։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Աղգիս ի 6 Ապրիլի թ. 154, որով ընդարձակեցան իրաւունք Փոխ-Թեմակալին Հայոց Երե-

ւանայ բանալ ի Գօրիս աւանի եկեղեցական ծխական երկդասեան տղայոց ուսումնարան և հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան վասն այնորիկ ուսումնարանին՝ Բարեկրօն Խորէն քահանայն Մելիք-Դաւայեանց, երեցփոխանն եկեղեցւոյ տեղւոյն և յարգելիք՝ Հայրապետն Բաղրեան և Յովհաննէսն Յարութիւնեան Մկրտչեանց. իսկ ի պաշտօն անձնափոխանորդաց՝ պատուելիք՝ Խաչատուրն Շափաղաթեանց և Մանուչարն Սափեան։

—

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի Ազգիս ի 11 Ապրիլի թ. 160, յանուն Մեծապատիւ Յովսէփ—աղայի Պետրոսեան Ալթունջեանց, վասն նուիրելոյ նորա զՀինգ հարիւր ռուբլ. ի նպաստ ծախուց վերանորոգութեան Տաճարին Ս. Էջմիածնի։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Ազգիս ի 18 Ապրիլի թ. 164, որով հաստատեցան ի պաշտօն Հոգաբարձութեան վասն եկեղեցական—ծխական երկդասեան օրիորդական ուսումնարանին Հայոց Ս. Աստուածածնին Թանդոյեան եկեղեցւոյ Կուկիոյ Տրփխիս քաղաքի՝ բարեկ. Ներսէս քահ. Ղամազեանց, երեցփոխանն այնր եկեղեցւոյ և պատուելիք՝ Զաքարիայն Գրիգորեան Զաքինեանց և Շաքարն Գուրգէնեան Նուրալեանց. իսկ ի պաշտօն անձնափոխանորդաց Յարգելիք՝ Դարչոն Եսայեան Առաքելանց և Ներսէսն Սարգսեան Յովհաննիսեանց։

ԲԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

19 Մարտի. Երևանի թեմի Փաշալու գիւղի Ստեփաննոս քահանայ Տէր Ստեփաննոսեանը ենթարկուում է երկամեայ ապաշխարութեան եկեղեցու դրանը, 15 ռուբլի տուգանքի յօգուտ Էջմիածնի և 5 ռուբլի տուգանքի յօգուտ Երևանի թեմի քահանայից որբոց և այրեաց գանձանակի։ Այս քահանան